№ 99 Շաբաթ Սեպտեմբերի 5 1887 Շաբաթ Սեպտեմբերի 5 № 99

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր միակ մխիթարական գործն էլ անկարգ դրութեան մէջ է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ լուսաւորչականներ և հայ-կաթոլիկներ Թիւրքիայում. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գործնական մարդիկ Ամերիկայում.

ՄԵՐ ՄԻԱԿ ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՆ ԷԼ ԱՆԿԱՐԳ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ Է

—

Եթէ հայերը մի բանով կարող են պարծենալ,—այդ իրանց դպրոցներով է։ Մենք ուրիշ ոչինչ հասարակական կեանք չունենք, մեզանում ուրիշ ոչինչ չէ աջողվում, բացի դպրոցներից։ Հայը, ժամանակակից հայը, իր բարոյական և մտաւոր միակ փրկութիւնը տեսնում է դպրոցներում։ Ամեն տեղ, որտեղ ապրում են հայերը, մեր հասարակութիւնը, լինի նա քաղաքային, կամ գիւղական,—հիմնում է դպրոցներ։ Հարուստ հայը մեռնելիս՝ դպրոցների և ուսման գործին է կտակում իր կարողութիւնը....

Դեռ ևս ուրիշ ոչինչ հասարակական հիմնարկութիւններ, հրապարակական հաստատութիւններ չեն աջողվում հայերի մէջ։ Հայը դեռ ևս չը գիտէ պահպանել ոչ թատրոն, ոչ մամուլ.... Միակ գործը որ մխիթարական է մեր մէջ, որ պահպանվում է հայի թէ անհատական և թէ հասարակական ոյժով, միակ հաստատութիւնն որ և օտարների աչքում բարձրացնում է հայի անունը,—դա մեր դպրոցական գործն է, դա մեր բազմաթիւ դպրոցների գոյութիւնն է։

Բայց այդ մեր հասարակական միակ մխիթարական գործն էլ ի՞նչ դրութեան մէջ է....

Ականջ դրեցէք մեր բոլոր խօսակցութիւններին մեր դպրոցների մասին, դիտեցէք մեր ուսումնարանների դրութիւնը, անկեղծօրէն և մանրակրկիտ կերպով քննեցէք մեր դպրոցների վիճակը,—և կը համոզվէք որ հայերի այդ միակ պարծանքն էլ, հայոց հասարակական կեանքի այդ միակ մխիթարական գործն էլ՝ անկարգ դրութեան մէջ է։

Մտէք այս կամ այն հայոց դպրոցը, սկսած բարձրագոյն հոգևոր ճեմարանից ու թեմական միջնակարգ հոգևոր դպրոցներից մինչև վերջին ծխական միդասեան ուսումնարանները, հարց ու փորձ արեցէք այս ու այն քաղաքից կամ գիւղից եկած ճանապարհորդին,—և ամեն տեղ կը լսէք հայերի, նոյն իսկ դպրոցական գործում մասնակցողների բերանից անվերջանալի գանգատներ մեր դպրոցների վերին աստիճանի անկարգ, անմխիթար կացութեան մասին։

Մեր հասարակական միակ մխիթարական գործն էլ, դպրոցը, ամեն տեղ, որտեղ հայերը ապրում են, ամենաանկարգ դրութեան մէջ է գտնվում միշտ, քանի որ այդ գործի գոյութիւնն էլ չէ պայմանաւորվում միմիայն ընդհանուր շահի, ընդհանուր օգտի անհրաժեշտութեամբ, այլ պայմանաւորվում է անհատների ինքնասիրութեան, փառամոլութեան, կամ անձնական նիւթական շահի պահանջներով։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այժմ սկսվել է ԹԻՖԼԻՍՈՒՄ բոլոր դատաստանական տեղերի քննութիւնը (րէվիզիա)։ Այդ քննութիւնը կատարվում է և Անդրկովկասի մնացած քաղաքների դատաստանատներում։ Քննութիւն անողները Ռուսաստանից եկած բարձրատիճան դատաստանական պաշտօնեաներն են, որոնք քննութիւնը վերջացնելուց յետոյ պէտք է ներկայացնեն մեր դատաստանատների դրութեան մասին իրանց զեկուցումը արդարադատութեան մինիստրին, որը չուտով սպասվում է մեր կողմերում։ Ասում են որ քննութիւն պէտք է կատարվի և նոտարական դրասենեակների վրա։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ հաղորդում են օդոստոսի 30-ից, որ տաք օրերին յաջորդել է հով եղանակը, որին քիչ չեն նպաստում այս օրերս տեղած առատ անձրևները։

—

Անդրկովկասեան երկաթուղու չնորհով այժմ Թիֆլիսում մրգերը չատ էժան և առատ են։ Օրինակ Գանձակի սպիտակ խաղողը, որ երկաթուղու կառուցվելուց առաջ ամենևին չէր բերվում Թիֆլիս, այժմ այնքան առատութեամբ է բերվում մեր քաղաքը, որ վերոյիշեալ խաղողի լաւ տեսակի ֆունտը այժմ 5 կոպէկով է ծախվում մեզանում։

—

Ինչպէս մեզ գրում են, ամառը ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ անտանելի է ջրի սակաւութեան պատճառով։ Վաղարշապատցիք ղլխաւորապէս մշակում են բամբակ։ Ով որ ունի մի կտոր հող, մեծ մասամբ սկսում է բամբակ ցանել իր հողի վրա։ Բայց յայտնի է, որ բամբակը առատ ջրի պէտք ունի, և ջրի պակասութեան պատճառով բնակիչների մէջ անընդհատ կռիւներ են պատահում։ Այնու համենայնիւ այս տարի ջրի հարցը աւելի բարեկարգ դրութեան մէջ էր, չնորհով նորընտիր տանուտէրի, որ այդ գործին տեղեակ է։ Մեզ գրում են, որ այս տարվայ հունձը, թէև սպասածին չափ չեղաւ, բայց և նուազ չէ կարելի ասել. գիւղացիք առհասարակ գոհ են այս տարվայ արդիւնքից։ Վաղարշապատի կողմերում խաղողը անչափ առատ է այս տարի. խաղողից և գինուց սպասում են լաւ արդիւնք, եթէ միայն մի անակնկալ պատուհասի չը հանդիպէ ժողովուրդը, ինչպէս և պատահել է անցեալ տարվայ սեպտեմբեր ամսին։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են։ «Այստեղ և Կարս այս ամառը երդչուհի տիկին Տիգրանեանց, որի մասին «Մշակը» գրել էր դեռ անցեալ տարի, տուաց մի քանի կոնցերտներ, որոնք բաւական աջողութիւն ունեցան և լաւ ընդունվեցան տեղական ամեն ազգութեանը պատկանող հասարակութիւնից։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ Շաւի-գիւղ ասված թաղի ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին գտնվում է կատարելապէս խարխուլ դրութեան մէջ։ Պատերը և առաստաղը այն ասպիճան քայքայված, քանդված դրութեան մէջ են, որ ամեն րոպէ եկեղեցու չինութիւնը կարող է փուլ դալ, մանաւանդ մեծ անձրևի ժամանակ։ Լաւ կը լինէր վաղօրօք այդ տեսակ վտանգի առաջն առնել, մանաւանդ աչքի առաջ ունենալով որ եկեղեցին կարող է քանդվել, երբ լի կը լինի աղօթողներով։

—

ԹԻՖԼԻՍԻ ջրանցքը արդէն գործում է և այժմ քաղաքիս ղլխաւոր փողոցները ջրվում են, այնպէս որ քաղաքիս գոնէ ղլխաւոր փողոցներում թոզ չէ լինում։ Բայց ուրիշ կողմից այդ փողոցները այնքան եռանդով են ջրվում, որ մի տրոտուարից դէպի միւսը անցնել չէ լինում առանց կալոշների, որովհետև սարսափելի ցեխ է գոյանում փողոցներում։ Այդպիսով փողոցներից մինում սաստիկ ցեխ է լինում, իսկ հարևան փողոցում, որը չեն ջրում, մարդը խեղդվում է թոզից։

—

Վերջին օրերը լուր էր տարածվել, որ սեպտեմբերի 4-ից մինչև նոյն ամսի 8-ը լինելու են արևելեան Ռուսաստանում, Վոլգայի և Կասպից ծովի վրա ներկայ դարում չեղած սաստիկ փոթորիկներ։ Այժմ, ինչպէս հաղորդում է հեռագիրը, այդ գուշակութեան ստուգութիւնը հերքում է Պետերբուրգի գլխաւոր դիտանոցը։

—

Այժմ չատ վտանգաւոր է դառնում ԹԻՖԼԻՍՈՒՄ ուշ գիշերով փողոցներում ման գալ։ Մի շաբաթ առաջ մի երիտասարդ ուսանող վերադառնալով գիշերվայ ժամը 3-ին Կրուժոկից Վէրայի կամուրջով, կողոպտվեցաւ աւազակներից։ Անոյշ չարագործները յարձակվեցան նրա վրա, զարկեցին փայտով նրա գլխին, խլեցին գրպանում նրա ունեցած մի քանի տասնեակ ռուբլիները և կողոպտվածին կամուրջի բարձրութիւնից նետեցին Կուր գետը։ Բաղդաւորապէս գետի ափից տեսան այդ մարդու ջուրն ընկնելը և օգնութիւն հասցրին։ Այժմ կողոպտված երիտասարդը հիւանդ պառկած է իր ազգականների տանը, իսկ չարագործները անհետացան։

—

ԴԷՐԲԷՆՏԻՑ մեզ գրում են. «Մեզանում սովորական բան է դարձել սպանութիւնը։ Այս օրերս մի պարսիկ խանութպան հիւր է կանչվում իր կրօնակից պարսիկների մօտ։ Նախ հիւրին պատում են, ճաշ են տալիս նրան այգիում, միասին քէֆ անում, իսկ վերջը կտրում են նրա գլուխը։»

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ ԱՄԷՐԻԿԱՑՈՒՄ

Հարուստներ «լուսաւորիչներ» և նոցա ծագումը

—

Ամէրիկական հասարակական ամենախոշոր բարեգործների կարճ տեսութիւնը ամենաւաւ ապացոյց կը լինի այն բանի, որ Պիտէր Կուպէրի մէջ նշմարված լաւ յատկութիւնները ունեն և ժամանակակից բազմաթիւ հարուստ ամէրիկացիներ։ Իսկ ինչ որ վերաբերում է նախկին ժամանակներին, այն ժամանակվայ հարուստների լուսաւոր բարեգործութեան յիշատակարաններ կազմում են ամէրիկական բազմաթիւ կոլէժները, համալսարանները, ակադէմիաները, որոնք բոլորը, սակաւ բացառութեամբ, հիմնված են և պահպանվում են մասնաւոր անձինքներից կտակված դումարներով։

Վասար իր միլիոնները, որ աշխատել էր դարեջրավաճառութեամբ, նուիրեց աղջկանց բարձրագոյն դպրոցի կառուցման համար, որը այժմ ամենաւաւ և ամենահարուստն է համարվում Միացեալ-Նահանգներում։

Ջոնս Խոպկինս ծնվեցաւ աղքատ ծնողներից և, գիւղական բոլոր երեխաների նման ստիպված էր ամառն աշխատել, ուսումնարան յաճախելով միայն ձմեռը. նա 17 տարեկան հասակում գործակատարի պաշտօն ստացաւ բանջարեղէն վաճառողի խանութում, ուր ծանր աշխատանքով և խիստ մտահոգութեամբ եօթ տարվայ ընթացքում ժողովեց 800 դոլլար, և այդ փողերից սկսեց հարստանալ, միլիոններ աշխատեց կօլօնիական ապրանքների առևտուրով, շարունակում էր մտահոգութեամբ ապրել, օգնելով միայն ուսանող երիտասարդութեանը և վաճառականների միջից անաջողակներին և միշտ մտածում ու խորհում էր իր ժողոված փողերը ամենաւաւ գործադրելու մասին։ Երբ, վերջապէս, բացարին կտակը, յայտնվեցաւ, որ նա թողել է 7,000,000 իր հայրենի Բալտիմոր քաղաքում համալսարան շինելու համար։ Այժմ Ջոնս Խոպկինսի ցնորքը իրագործվեցաւ, և նրա անունը կրող համալսարանը ամենաբարձրն է համարվում ամբողջ Միացեալ-Նահանգներում. այնտեղ մտնում են դասախօսութիւններ լսելու շատերը այն ուսանողներից, որոնք աջողութեամբ աւարտել են իրանց ուսման ընթացքը ուրիշ համալսարաններում։ Այդ համալսարանում, իրան Ջոնս Խոպկինսի ցանկութեամբ, քսան թոշակաւորներ կան հիմնադրի անունով, համալսարանը ունի հիւանդանոց, ունի ուսումնարան հիւանդապահներին կրթելու համար և մի ապաստարան չորս հարիւր աղքատ և որբ-խափշիկների համար։ Ներկայումս Ջոնս Խոպկինսի համալսարանը 41 պրոֆէսորներ ունի. ստիպէնդիաները, տարեկան 500 դոլլար իւրաքանչիւրը, բաժանվում են աղքատ և արժանաւոր ուսանողներին, առանց խստրութիւն դնելու ազգութիւնների մէջ. դեռ ևս անցեալ տարի, որպէս ինձ յայտնի է, Խոպկինսի համալսարանում թոշակաւորների թւում մէկը ֆրանսիացի ուսանող էր, իսկ միւսը եապօնացի էր Տօկիօից։ Այդ համալսարանում ուսանողական սովորական խաղեր գոյութիւն չունեն, այնտեղ մտնում են միայն նրանք, որոնք հաստատ վճռել են պարապել գիտութիւններով, և անփոյթ ու ծոյլ ուսանողներ, որպէս հաւատացնում են, բոլորովին չը կան։ Իր օգտակար գործունէութիւնը այդ համալսարանը պակում է նրանով, որ հրատարակում է իր միջոցներով վեց մասնաղիտական-գիտնական ամսագիրներ։

Լէզրա Կօրնէլ, համանուն մեծ համալսարանի հիմնադիրը Նիւ-Եօրկ նահանգի արևմտեան մասում, նոյնպէս գիւղական ընտանիքին էր պատկանում և մանկութիւնը անցկացրեց այնպիսի աղքատութեան մէջ, որ ժամանակ չունէր մինչև անգամ մերձակայ գիւղական ուսումնարանը յաճախել։ Սակայն նրա դէպի կրթութիւնը ունեցած ձգտումը պակաս չէր նրա բնական եռանդից, և ահա 16 տարեկան հասակում արդէն Լէզրա, իր 15-ամեայ եղբօր հետ միասին, մի որոշ վճարով յանձն է առնում կտրել հարևանի 15 ակր տարածութիւն ունեցող մի խիտ անտառի ծառերը. վերջը եղբայրները նոյն հողը մաքրեցին խոտերից, սիմինդր ցանեցին, ստացան պայմանաւորեալ վճարը և այդ ճանապարհով ժողովեցին բաւական փող, որպէս զի երեք ձմեռնային ամիսներ կարողանան առանց աշխատելու ապրել, ուսումնարան յաճախելու համար։ Ցան և եօթ տարեկան Լէզրա Կօրնէլ, իր սեփական ջանքերով, կրտսեր եղբայրների օգնութեամբ փայտէ տուն շինեց իր հօր ընտանիքի համար. իսկ 18 տարեկան—նա արդէն տանից հեռացաւ փող աշխատելու համար, և որպէս ինքնուս-մեխանիկ և հիւսն, զանազան պաշտօններ էր վարում գործարաններում և գործատներում։

Բայց, չը նայելով իր կանոնաւոր կեանքին և տոկուն աշխատանքին, փողը դժուարութեամբ էր ձեռք բերում նա։ 36 տարեկան Կօրնէլ մի գեղեցիկ օր առանց գործի և առանց փողի մնաց իր կնոջ և ինն զաւակների հետ միասին։ Նա ոտով արևելեան և միջին նահանգներում մի հազար մղոն անցաւ գործ գտնելու համար։ Վերջապէս նրան ընդունեց իր մօտ հեռագրի հնարող Մորզ. Լէզրա Կօրնէլ ամբողջ հոգւով նուիրվեց հեռագրական գործի մեծ ապագային, կապեց նրա հետ իր ապագայ վիճակը և աշխատեց իր առաջին 6,000 դոլլարը հեռագրական գիծ անցկացնելով Նիւ-Եօրկից դէպի Ալբանի։ Որպէս և չատ ուրիշ մարդկանց համար, Կօրնէլի համար ևս չատ դժուար էր առաջին հազարները աշխատել. միլիոնները յետոյ համեմատաբար չատ հեշտ ձեռք բերվեցան, չը նայելով որ նա ստիպված էր ամբողջ 12 տարվայ ընթացքում անդադար աշխատել և համարեա ամբողջ ժամանակը հեռու լինել իր սիրելի ընտանիքից։

Իր չը սպասած ահագին հարստութեանը հասնելով, Լէզրա Կօրնէլ մտածում էր՝ թէ որպէս աւելի լաւ կը լիներ բաժանել իր հարստութիւնը, և նրա մտքերը, բնականաբար, վերադառնում էին

Այս օրերս ինչպէս մեզ գրում են, Դէրբէնտի շրջակայ գիւղերից մինում մի պարսիկ կին ծընում է երկու գլխանի մի զաւակ։ Կինը գալիս է քաղաքը, իր հետ բերելով իր հրէշ երեխային և դիմելով բժշկին՝ խնդրում է որ գլխներից մին կտրէ, որպէս զի մանուկը մի գլխով ապրի։ Բայց բժիշկը հրաժարվում է այդ տեսակ օպէրացիա անելուց և խորհուրդ է տալիս մօրը իր զաւակին Պետերբուրգ ուղարկել։

—

Լրագիրներ հաղորդում են որ բարձր կառավարչական շրջաններում մտադրութիւն կայ Ռուսաստանում մտցնել այժմեան գործածվող չափերի փոխարէն մետրիկական չափեր։ Այն բոլոր գիտնական և արդիւնաբերական հիմնարկութիւնները, որոնց առաջարկված է իրանց կարծիքը յայտնել այդ վերանորոգութեան մասին, բոլորն էլ համակրութեամբ են վերաբերվել դէպի նրան։

—

Թիֆլիսի ջրանցքից, որի ջրով մինչև այժմ միայն մի քանի փողոցներն են ջրվում, սեպտեմբերի 7-ից կը սկսի օգտվել լիովին ամբողջ քաղաքը։

—

Գաւառական գանձարաններին իրաւունք է տրված ընդունել երկու ներքին փոխառութիւնների խաղարկութեան տոմսակների կուպոններ, և մանրացնել նրանց այն հիմունքների վրա, ինչպէս պետական բանկ։

—

Տեղական ռուս թերթեր հաղորդում են, որ վերջին խաղարկութեան ժամանակ 200,000 ռուբլին տարել է տիկին Վարլամօվա, որ ապրում է Թիֆլիսում։

—

Թիֆլիսի ֆրանսիական հիւպատոսարանի կառավարիչը ուղարկեց մեր խմբագրութեանը մի փոքրիկ բրոշիւր ֆրանսերէն լեզուով, որ պարունակում է իր մէջ ընդհանուր և ամենահանրաժեշտ տեղեկութիւններ Փարիզում 1889 թվին լինելի համաշխարհային ցուցահանդէսի մասին։ Ինչպէս երևում է այդ տպված տեղեկութիւններից, 1889 թվի ցուցահանդէսը, թէ իր դիրքի ընդարձակութեամբ, թէ հանդէս դրուելի առարկաների բազմութեամբ, և թէ վերջապէս բաժինների բազմատեսակութեամբ՝ շատ և շատ պիտի գերազանցի 1867 և 1878 թուերին եղած Փարիզի համաշխարհային ցուցահանդէսները։

—

Աղստաֆա-Դիլիջանի ճանապարհի ՈՒԶՈՒՆ-ԹԱԼԱ կայարանից մեզ գրում են. «Այստեղից ութ վերստ հեռաւորութեան վրա գտնվող Աչաչուր գիւղում այս քանի օրերս կատարվել է մի սպանութիւն, որը ունի հայ գիւղերում անսովոր համարվող մի պատճառ։ Սպանվածը մի ամուսնացած երիտասարդ է. նրա դիակը գտել են գիւղի մօտերքումն։ Ահա թէ ինչ են պատմում գիւղացիք այդ սպանութեան մասին։ Սպանված երիտասարդը փորձում է մօտիկ յարաբերութիւններ ունենալ մի կնոջ հետ. կինը մերժում է երիտասարդի պահանջը, և չէ ցանկանում կատարել նրա ցանկութիւնը։ Մի գիշեր գալիս է երիտասարդը, և երբ կրկին անկարող է լինում հասնել իր նպատակին, ծածուկ կերպով վերցնում է կնոջ արծաթեայ զարդերը և հեռանում։ Մի քանի օրից յետոյ երիտասարդը յայտնում է կնոջը, որ եթէ սա կը կատարի իր ցանկութիւնը, նա յետ կը տայ իր զարդերը։ Կինը անկարող լինելով այդ ծանր դրութիւնից իր սեփական ոյժերով ազատվել, յայտնում է բոլորը իր մարդուն։ Որպէս զի կարողանայ յետ ստանալ արծաթեայ զարդերը, մարդը ասում է կնոջը, որ համաձայնութիւն տայ երիտասարդին, և հրաւիրէ իրանց տունը։ Իսկ մարդը պատրաստվում է ծածուկ կերպով իր վրէժը առնել։ Երբ երիտասարդը գալիս է, և իր ախտաբորբոք դրութեան մէջ դիմում է կնոջը, իսկոյն մարդը մի քանի մարդկերանցով յարձակվում են նրա վրա և պահանջելով նրանից արծաթեղէնը, նրան խեղդում են, և ապա հեռու տեղ տանելով՝ գլուխը կտրում դէն են գցում։ Այդպիսի սպանութեան դէպքը մեծ տպաւորութիւն է թողել թէ այդ և թէ շրջակայ գիւղերում, թէև ուրիշ պատճառներով կատարվող սպանութիւնները այս կողմերում սովորական բան են դարձել. վերջին հինգ օրվայ ընթացքում այս կողմի գիւղերում վեց սպանութիւն եղաւ, մեծ մասը յափշտակելու նպատակով։»

—

ՔԱՐԱՎԱՆՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են։ «Տեղական իշխանութեան կարգադրութեամբ խճուղի ճանապարհի վրա Քարավանսարայից մինչև Թարասչայ կայարանի կողմերը պահապաններ են դրված։ Այդ պահապանները մօտիկ գիւղերիցն են, և գիշեր ցերեկ հսկում են ճանապարհի վրա։ Լուրեր են պտտում, որ աւազակներ են երևացել այս կողմերում, թէև մինչև այժմ ոչինչ մի այնպիսի դէպք չէ պատահել, որ հաստատէր այդ լուրը։ Թէև տարվայ այս միջոցին այդ գիւղացիներին դժուար է ամիսներով տուն, տեղ և ամեն գործ թողնել և հսկել ճանապարհների վրա, բայց առհասարակ աւազակութիւնները այնքան շատ են, որ եթէ այդ պահապանները չը լինէին, գուցէ շրջակայ մի քանի գիւղերը անկարող կը լինէին իրանց տաւարը դուրս թողնել արօտատեղիները, որովհետև թուրքերը օրից օր աւելի են սաստկացնում իրանց գողութիւնները, յափշտակելով հայերի ոչխարները և տաւարը։»

—

ՈՒԶՈՒՆ-ԹԱԼԱՅԻՑ մեզ գրում են. «Հունձը այս կողմերում վաղուց վերջացել է. մինչև անգամ կալսելն էլ վերջացաւ. հունձը ընդհանրապէս աջող է համարվում. բայց բերքը այնքան էլ լաւ չէ. աղքատութեան մի մասը, մանաւանդ աղքատ դասը, ինչպէս երևում է, այս տարի ստիպված կը լինի ցորեն առնել։ Ցաւալի է, ի հարկէ, որ այս առատ երկիրը այնպէս չէ մշակվում, որ կարողանար բաւական բերել իր բնակիչների ապրուստը մշտապէս»։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի ժամանակ սրանից առաջ՝ արօտատեղիների պատճառով պատահած սպանութիւնների գործերը դեռ մնում են առանց մի վճռի։ Ցաւալի է արդէն, որ այդ արօտատեղիների պատճառով հայերի, մալականների և թուրքերի մէջ կռիւներ պատահեցան. թուրքերը սպանեցին նոյն իսկ այն մարդոց, որոնք գնացել էին բաժանելու արօտատեղիները. երեք հոգի հէնց իսկոյն զոհ դառնացին թուրքերի կատաղութեան. հայերի քեօխվան իր ստացած վէրքերից արդէն մեռաւ, իսկ մալականների քեօխվան էլ դեռ հիւանդ պառկած է իր ստացած վէրքերի պատճառով։ Թշնամութիւնը դեռ շարունակվում է այդ արօտատեղիների հարցի պատճառով. շատ կանոնաւոր հսկողութիւն պէտք է լինի, որ այդպիսի դէպքերը չը կրկնվեն. բայց ամենքն էլ ասում են, որ այդ նոյն գործի պատճառով դեռ էլի կռիւներ կարող են լինել, մի քանի անգամ դիմել են գաւառապետ Թարխանովին՝ խնդրելով որ հարկաւոր հոգացողութիւնն անի, բայց դեռ ոչինչ չէ եղել, և նոյն իսկ սպանութիւն գործող թուրքերն էլ չեն ձերբակալված։ Գործը մասամբ մոռացութեան է տրված, և այդ էլ հէնց բաւական է, որպէս զի այս կողմերում այդպիսի դէպքերը կրկնվեն։»

—

ԱԽՏԱՅԻՑ մեզ գրում են։ Մի քանի օր սրանից առաջ մի ռուս երիտասարդ ատրճանակով սպանեց իր հարազատ հօրը։ Սպանվածը մի ժամանակ կատարում էր գաւառապետի օգնականի պաշտօնը, բայց հարբեցողութեան պատճառով հրաժարեցրած էր ծառայութիւնից։ Դուրս գալով ծառայութիւնից նա չը կարողացաւ յետ մնալ իր սովորութիւնից և սկսեց տան եղած չեղած կաքը ծախել, որ բաւականութիւն տայ իր արատին։ Որդին չը կարողանալով այլ ևս դիմանալ, սպանեց նրան։

—

ԱԽՏԱՅԻՑ մեզ գրում են։ «Այս օրերս այստեղ մեռաւ մի պառաւ կին, Խասադիւլ անունով, որ կը տակել է երկու հարիւր ռուբլի Շուշու հայոց դպրոցին։ Թաղման օրը հանդուսարանում հաւաքվեցաւ յօգուտ մի աղքատ ընտանիքի 19 ռուբլի։

—

ՔԵԱՖԹԱՐԼԻ գիւղից մեզ գրում են։ Օգոստոսի 30-ին ճաշից յետոյ այստեղ սաստիկ անձրև եկաւ կարկտախառն և տևեց մօտաւորապէս կէս ժամ։ Թէև հացերը հաւաքված են, այնու ամենայնիւ այդիներին մեծ վնաս հասաւ։ Բացի դրանից անձրևը շատ վնաս տուեց և տներին։ Նոյն տեղից ևս գրում են, որ այս տարվայ հունձը բաւական առատ է, բայց այժմանից նկատվում է որ յետոյ ցորենը պէտք է թանգանայ, քանի որ մեծ պահանջ կայ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ-ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

«Русскій Курьеръ» լրագրում կարդում ենք հետևեալ յօդուածը։

Կ. Պոլսից եկած լուրերին նայելով, այդտեղի պաշտօնական շրջաններում անհանգստութեամբ հետևում են այն երկպառակութիւններին, որոնք տեղի են ունենում Թիւրքիայի հայ-լուսաւորչականների և հայ-կաթոլիկների մէջ։ Այդ երկպառակութիւնները վաղուց է արդէն որ սկսվել են, շնորհով Տիգրանակերտի մէջ երկու, երեք տարի առաջ պատահած անցքերին։ Այդ վիլայէթը բընակեցրած է շատ աղքատ հայերով, որոնք շատ անգամ դիմած են օսմանեան կառավարութեանը և հայոց պատրիարքին, խնդրելով որ պակասեցնեն նրանց վրա դրված պետական ծանր հարկերի չափը։ Պատրիարքը միջամտեց Բ. Դրան մօտ, բայց անաջող։ Տիգրանակերտի վիլայէթում բնակվող ֆրանցիսկեան եղուիտները այդ հանգամանքից օգուտ քաղելով, սկսեցին համոզել հայերին, որ եթէ նրանք ընդունեն կաթոլիկութիւնը, այն ժամանակ Կ. Պոլսի կաթոլիկ պատրիարքը իր ամբողջ ոյժը գործ կը դնի Բ. Դրան վրա ներգործելու՝ հարկերը պակասեցնելու հարցը գլուխ բերելու համար։ Ժողովուրդը հաւատաց եղուիտներին և սկսեց կրօնափոխ լինել և անցնել դէպի կաթոլիկութիւնը։ Կ. Պոլսի հայոց լուսաւորչական պատրիարքը դիմեց այն ժամանակ կառավարութեանը, խնդրելով որ սա միջոցներ գործ դնի եզուիտների ինտրիգների դէմ և ուղարկեց Դիարբէքիր մի եպիսկոպոսին, կրօնափոխութեան գործին առաջն առնելու նպատակով։ Կաթոլիկների պատրիարք, Ազարեան, իր կողմից նոյնպէս սկսեց եռանդով գործել. նորերումս նա այցելեց արդարադատութեան և դաւանութիւնների մինիստրին և սկսեց ապացուցանել նրան, որ եղուիտները, դարձնելով հայերին լուսաւորչականութիւնից դէպի կաթոլիկութիւնը, դրանով մեծ օգուտ են բերում Թիւրքերին, քանի որ հայ-կաթոլիկները կոսմոպոլիտներ, ազգութիւնից զուրկ մարդիկ են դառնում, և չունեն, հայ-լուսաւորչականների նման, ազգային ինքնաճանաչութեան ձգտման ամենաչնչին նշոյլն անգամ։ Այդ պատճառով Բ. Դուռը հակվում է դէպի եղուիտները։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 25 օգոստոսի

Պ. Ռ. Պատկանեան վաղն առաւօտ կը մեկնի Պոլսէն Սեւասթաբոլի ճանապարհով Նախիջևան գնալու։ Մեր բանաստեղծի ներկայութիւնն ի Պոլիս շատ փառաւոր երևոյթ մը եղաւ ազգային գրականութեան համար։ Ոչ մի պոլսեցի կը յիշէ այն ժամանակներին, երբ նա, պատանեկութեան ժամանակ, ձգտում էր դէպի գիտութիւնը և չը կարողացաւ ցանկալի կրթութիւնը ստանալ։ Կօրնէլ բաւական մեծ գումարներ էր նուիրում զանազան դաւանութեան եկեղեցիներին, բայց այդ նրան չէր բաւականացնում։ Եւ ահա, նա համալսարան է հիմնում, նուիրելով այդ նպատակով 200 ակր գետին և կէս միլիոն էլ փող։ Համալսարանը բացվեցաւ 1868 թվին, և ամբողջապէս Կօրնէլին 3 միլիոն նստեց։ Վերջը, համալսարանին նուիրատուութիւններ արին և շատ ուրիշ անձինք, այնպէս որ այժմ դա Միացեալ-Նահանգների ամենահարուստ համալսարաններից մէկն է համարվում, և նրա դասախօսութիւններին հազարից աւելի ուսանողներ են ներկայ գտնվում։ Կօրնէլ վախճանվեցաւ 1874 թվին, հաւատացած լինելով, որ իր սիրած գործը հաստատ հիմունքների վրա է կանգնած։

Զօն Վաննամէկէր—որով այնպէս պարծենում է Ֆիլադէլֆիան—մինչև այժմ էլ երիտասարդ մարդու է նման, չը նայելով որ նա արդէն 47 տարեկան է և արդէն կարողացել է մի քանի միլիոնների դրամագլուխ կազմել և իր համաքաղաքացիների, մանաւանդ աղքատ դասակարգի, որի շրջանից դուրս է եկել ինքը, սէրը և յարգանքը գրաւել։

Վաննամէկէրի առաջին աշխատանքը օրական այն երկու ցէնտն էր, որ ստանում էր նա իր աղիսագործ հօրից այն բանի համար, որ, առաւօտները վաղ վերկենալով, փոքրիկ Զօնը շուռ էր տալիս աղիսները. մանուկ հասակում արդէն Վաննամէկէր սկսեց ծառայել մի գրավաճառի մօտ շաբաթական $1^1/_4$ դօլլարով, որից իր ուտելեղէնի վրա ծախսում էր երկու ցէնտ, իսկ մնացածը յետ էր գցում. նա գիշերով տուն էր գընում, իսկ տունը գտնվում էր քաղաքից չորս մղոն հեռաւորութեան վրա, և առաւօտեան վաղ վերադառնում էր գրավաճառանոցը ոտով։ Գրավաճառանոցը մանկան համար ուսումնարանի տեղ ծառայեց, և ընթերցանութիւնը այն աստիճան ընդարձակեց նրա մտաւոր շրջանը, որ, արդէն 18 տարեկան երիտասարդ Վաննամէկէր ընկերացաւ իր ծանօթ մի երիտասարդի հետ, որ փող ունէր, և սկսեց հրատարակել «Everybody Journal» անունով լրագիրը։ Այդ լրագրի հրատարակութեան ժամանակ, որ երկար գոյութիւն չունեցաւ, Վաննամէկէր առաջին անգամ ցոյց տուեց իր կամքի ոյժը և եռանդը, որ մինչև հանճարեղութեանն էին հասնում, և նոյնպէս անդադար աշխատելու ընդունակութիւնը։ Նա ինքն էր յօդուածներ գրում իր լրագրի համար, ինքն էր նիւթերը ժողովում և ինքն էր ծախում իր լրագրի համարները։ Դրա հետ միաժամանակ նա մասնակցում էր զանազան եկեղեցիների մօտ կիրակնօրեայ դպրոցների ղեկավարութեանը։ Քսան և երեք տարեկան Վաննամէկէր գործակատարի պաշտօն ստացաւ պատրաստ շորերի մի խանութում, տասն և հինգ տարի աշխատեց այնտեղ, ընկերացաւ խանութի տիրոջ հետ, գեղեցիկ տանում էր գործերը, ազնիւ կերպով առևտուր էր անում և մեծ-մեծ յայտարարութիւններ էր արպում լրագիրներում իր խանութի մասին։ Եւ այժմ, Նիւ-Եօրկից սկսած մինչև Ֆիլադէլֆիա, 60 մղոն տարածութիւն ունեցող ճանապարհի վրա, անդադար աչքի են ընկնում յայտարարութիւններ «Վաննամէկէր» անունով, որոնցով յայտնում է հասարակութեանը, թէ իր մագազիններում ամեն բան էժան կարելի է գնել։

Ներկայումս Վաննամէկէր երեք մագազին ունի Ֆիլադէլֆիայում, որոնցից ամենամեծը ամբողջ եօթ ակր տեղ է բռնում, այսինքն մօտ երկու դեսյատին հող. միայն այդ մէկ մագազինում երեք հազար մարդիկ են ծառայում, ունի ընթերցարան այցելուների համար, փօստային բաժանմունք, հիւրանոց և գրասենեակ՝ ապրանք ուղարկելու արտասահման և ուրիշ տեղեր, և այլն։

Սակայն, որքան էլ զբաղված լինի Վաննամէկէր, նա միշտ պատրաստ է ամեն բանը թողնել, եթէ որ և է, թէկուզ բոլորովին նրան անծանօթ «եղբայր ի Քրիստոս» գայ նրա մօտ և խնդրի աղօթել նրա հետ միասին. միլիոնատէրը ամենևին չէ կորցրել հաւատը դէպի աւետարանի այն խօսքը, թէ «ուր կը հաւաքվեն երկու կամ երեք հաւատացեալ յանուն Իմ, այնտեղ եմ և ես նրանց մէջ», և միշտ պատրաստ է թողնել ամենանպետաձգելի գործ, անկեղծ հաւատացող մարդու հետ միասին աղօթելու համար։ Տասներեք տարիների ընթացքում Վաննամէկէր նախագահ է «Երիտասարդ մարդկանց քրիստոնէական ընկերութեան», որի օգտին հարիւր հազար դօլլարից աւելի է նուիրել։ բացի դրանից նա իր միջոցներով եկեղեցի կառուցեց, շատ փողեր է տալիս յօգուտ հիւանդանոցների և ապաստարանների, իսկ հինգ տարի առաջ հիմնեց տեխնիական ուսումնարան «Bethany»-ում ուր 500 տղաներ և աղջիկներ ձրիաբար սովորում են հաչապահութիւն, հեռագրական արուեստ, խոհարարութիւն, կար, նկարչութիւն և գրաշարութիւն. այդ ուսումնարանը շատ նման է Նիւ-Եօրկում Կուպէրի հիմնած ուսումնարանին, թէպէտ և Կուպէրի ուսումնարանի ընդարձակ չափերին չէ հասել։ Կասկած չը կայ, որ Վաննամէկէր դեռ ևս շատ բան կանի իր սիրած հիմնարկութեան համար և չի մոռանայ իր դրամագլխի մի մասը նուիրել յօգուտ իր ուսումնարանի, այն դրամագլխի, որը ամբողջապէս պէտք է բարեգործական նպատակներին յատկացվի, որովհետև Վաննամէկէր պսակված չէ և ընտանիք չունի։

Ֆիլադէլֆիայում ապրում է նոյնպէս մի ուրիշ նշանաւոր ներկայացուցիչ ամերիկացիների այն ոչ-փոքրաթիւ դասակարգի, որոնք, կարծես թէ, իրանց կեանքի նպատակ են չինում հարստանալ և ապա այդ հարստութիւնը գործադրել իրանց համաքաղաքացիների լուսաւորութեան գործի վրա։

Ես խօսում եմ Ջորջ Ջայլդսի մասին, որին պատկանում է «Philadelphia Ledger» մեծ լրագիրը և որը ամենամօտ բարեկամն էր Նորերումս վախճանված նախկին-նախագահ Գրանտի։ Բացի

թէ երբէք մի հիւրի այդքան փառաւոր և սիրալիր ընդունելութիւն եղած լինի։ Կարելի է ասել թէ ամբողջ Պոլիս ոտքի վրայ էր։ «Արևելք» օրն օրին կարձանագրէր ինչ որ կը պատահէր բանաստեղծին։

Պ. Պատկանեան հիւր եղած էր պ. Գր. Նիկողոսեանին, որ պատուական առաջնորդ մը եղաւ Պոլսական լաբիւրինթոսին մէջ։ Ամեն առաւօտ կանուխ խումբ խումբ հայեր կը դիմէին պ. Պատկանեանին մօտ. այդ հայերը կը պատկանէին ընկերական ամեն դասուց. բայց կարծեմ թէ բանաստեղծի սրտին շատ մօտիկ եկաւ Հայաստանի քաղաքներու և գիւղերու պատգամաւորութիւնը։ Պոլիս գտնուող պանդուխտք պատգամաւորութիւններ կազմելով տասը, քսան քաղաքներու ներկայացուցիչները կը դիմէին առ հեղինակը «Հիմի էլ լունք»-ի։

Եկեղեցական թէ աշխարհական, աղքատ թէ հարուստ, առանց կրօնական խտրութեան ամեն հայք իրարու ձեռքէ կը խլէին յարդելի հիւրն որ չէր գիտեր ինչպէս բաւել ամենուն։ Մի օր հարուստ գործարանատէր մէ որ իւր շոգենաւն ու կառքն կը դնէ բանաստեղծին տրամադրութեան ներքև, յաջորդ օրն կաթոլիկ հայոց Ազարեան Պատրիարքն է որ նմա նախանձողդ կը հանդիսանայ։ Ի Պեօյիւքտերէ թէ ի կղզին Իշխանաց, ի Բերա թէ ի Գատըդիւղ ամէն օր խընջոյքներ են։ Հայ հարուստը, հայ մեծատունը կը զդայ թէ այլ ևս ժամանակն անցած է անտարբեր մնալ բանաստեղծի մը համբաւոյն առաջ երբ ազգին սիրտը կը բաբախէ այդ բանաստեղծին հետ։

Այդ ամեն խնջոյքներն աքանչելի առիթներ էին պ. Պատկանեանի համար ի մօտոյ դիտել Պոլսոյ հայ ընկերականութեան բոլոր անդամներն։ Տեսաւ և երկար խօսակցեցաւ Դրան հայ պաշտօնեաներու հետ։ Տեսակցեցաւ Պոլսոյ բոլոր դրողներու հետ, տեսաւ—և զմայլեցաւ—մեր ամենէն պատուական տիկիններն ու օրիորդները։ Ինչպէս յիշեմ մի առ մի բոլոր անուններն, ըսեմ թէ ոչ ոք գրեթէ դուրս մնաց։ Ի մասնաւոր պէտք է յիշատակել կաթոլիկ հայոց Ազարեան Պատրիարքն որ մեծապէս ուշադիր գտնուեցաւ և յոյժ ազնուական կերպով պատուասիրեց ազգային բանաստեղծին։

Բայց չը կարծուի թէ պ. Պատկանեան միայն սեղաններու միջոցաւ ծանօթացաւ Պոլսոյ հայոց հետ. մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը ըրաւ. այցելեց որչափ ներեց իւր ժամանակը բոլոր մեր հաստատութիւններն։ Այս վերջի օրերս պ. Պատկանեանէ անբաժան էր պ. Զերազ, որոյ հետ միասին գնաց պ. Պատկանեան Ազգային Հիւանդանոցը։ Մարմարայի ծովուն վրայ, օդաւէտ դաշտի մը մէջ, ընդարձակ չէնք մէ Ս. Փրկչի Ազգային Հիւանդանոցն, վայրն է լուին, մելամաղձիկ անդ. եօթն հարիւր թշուառ հայեր, հիւանդ, խելագար, ապուշ, ծեր, որբ, այր թէ կին իրենց թշուառութեանցն ապաստարան մը կը գտնեն. այդ սուրբ հիմնարկութիւնը, գործ Պէզճեան Յարութիւն (Գաղէզ) ամիրայի, առաջին հաստատութիւնն է Թիւրքիոյ մէջ և օրինակ մը հանդիսացաւ այլոց։ Ո՛չ մի հայ չէ կարող առանց փղձկելու Ազգային Հիւանդանոցի դալարապատ համեստ դէմքն մտանել։ Յուզեալ և սրտաբեկ այցելած է բանաստեղծն այդ հիւանդանոցն, որուն համար ըսած է «Ահա Պոլսոյ հայոց ճշմարիտ ուխտաստեղին։»

Ուխտաստեղի մը նաև Ներսէսի դերեզմանը, որոյ վրայ ինկած կուլար երէկ Գամառ-Քաթիպայ։ «Ամբողջ մարմնովս սարսռեցայ, կըսէր իսկ պ. Զերազ, երբ Մայր-եկեղեցւոյ տաճարին խոր լռութեան մէջ լսեցի Պատկանեանի հեծկլտանքն։ Բացաւ գլուխն, աղօթեց և յետոյ արտասուեց ու արտասուեց. ոչ ապաքէն այդ արցունքներն ընդհանուր հայութեան արցունքներն են։»—Ներսէսի դերեզմանէն յետոյ դիմեց Պէզճեան ամիրայի—նա որ ազգային բարերարի տիտղոսին իրաւամբ արժանացած է—այդ դերեզմանն ալ Մայր-եկեղեցւոյ մէջն է։ Իսկ Պատկանեաններու պապին այցելութիւնն իւր վերջին այցելութիւնն եղաւ այսօր։ Իրենց պապը կը հանդչի Բերայի համբաւաւոր գերեզմանատան մէջ։

Սակայն պէտք չէ ծածկել թէ Պոլսոյ հայք բաւական ծանր կացութեան մը մէջ էին իրենց հիւրասիրութեան առթիւ։ Այն ինչ պ. Պատկանեան շոգենաւէ դուրս ելաւ, անմիջապէս նրա մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդուեցաւ ներքին գործոց նախարարութեան և արքունի պալատն։ Մի քանի օր վերջ նորա երգերն տաճկերէնի թարգմանուելով դարձեալ հաղորդվեցաւ նոյն բարձրագոյն վայրերն։ Քաղաքական արդի կացութեան մէջ այս ամէնն իրեն կարևորութիւնն ունի, և թէպէտ պ. Պատկանեան յոյժ խոհեմ հանդիսացաւ, այսու հանդերձ կառավարութիւնը ուշադիր էր նորա ամեն քայլերուն։ Այսպիսի պարագայի մը մէջ Պոլսոյ հայ երիտասարդութիւնը խոհեմութիւն համարեց մեծամեծ ցոյցեր ընելէ զգոյշ կենալ և այս իսկ էր պ. Պատկանեանի փափաքն։ Պոլսոյ հայ երիտասարդութիւնը զանազան կողմեր սեղաններ կը պատրաստէր, բայց ամենն ալ ետ կենալու հարկն տեսան։

Բայց Գատը-գիւղի հայ երիտասարդութիւնն որ այժմ Պոլսոյ հայոց երիտասարդութեան ներկայացուցիչը կրնայ համարուիլ, փափագեցաւ որ բանաստեղծ իւր հետ մի տեսական յիշատակ տանի։ Այդ յիշատակն այսօր տուին պ. Պատկանեանի։

Յորմէ հետէ կը գրեմ «Մշակին» շատ առիթ ունեցած եմ յիշել Գատը-գիւղի անունն. Մարմարայի ծովուն ասիական ափանց վրայ նոր կառուցուած Պոլսոյ մի արուարձանն է։ Անդ հաւաքուած են Պոլսոյ նշանաւոր վաճառականներէն շատերը։ Այդ վաճառականներն բաւական լաւ ոգի ունեցող մարդեր էին և իրենց զաւակներն ալ լաւ եղան։ Վերջի տասը տարիներու մէջ Գատը-գիւղ պարագլուխ հանդիսացաւ ամեն օգտակար գործերու. բաւական է ըսել թէ սովու տարիներն Գատը-գիւղ էր կեղրոնն Հայաստանի նպաստներու. Ներսէս Պատրիարք ներշնչեց համայն դատը-գիւղացիներու և իւր հոգին միշտ անոնց վրայ ամպ հովանի է։ Գատը գիւղի մէջ կայ դրամ, խելք, սիրտ, միայն թէ խոհեմ են—իմ կարծեօք թերևս մերթ ընդ մերթ պէտք եղածէն մի քիչ աւելի։

Գատը-գիւղի հայ երիտասարդութիւնն այսօր կէսօրէն վերջ իւր մէջէն պատգամաւորութեամբ մը, որոյ կառաջնորդէր Թաղին եռանդուն քարոզիչ վարդապետը, ներկայացաւ պ. Պատկանեանի Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին մէջ։ Պատգամաւորութիւնը յանձնեց բանաստեղծին մի յոյժ գեղեցիկ թանաքաման արծաթեայ։ Թանաքամանը, որ մի փոքրիկ սնդուկի մէջ է, բարակ գործ մէ. մի կողմն թանաքի, միւս կողմը փոշիի յատկացեալ, մէջ տեղը մի դիցուհի—Աթենաս—մէկ ձեռքովը պսակ մը բռնած, միւս ձեռքովը վահան մը, որոյ վրայ գրուած է Գամառ-Քաթիպայ։ Թանաքամանի պատուանդանի վրայ գրուած է նաև նուրբ գրերով «Կ. Պոլսոյ Գատը-Գիւղի հայ երիտասարդութիւնն առ պ. Ռ. Պատկանեան. 1887 օգոստոսի 25.» Այդ կաղամարի հետ միասին է մի ոսկեփեստուր գրիչ Ռ. Պ. գրերով։ Սոյն նուէրներն ներկայացուցին մասնաւոր ուղերձով մը։

Թանաքամանէ վերջ տրուեցաւ մի պատկեր որ խորին տպաւորութիւն թողեց բանաստեղծին վրայ։ Այդ պատկերը մի խեղճ մշեցւոյ պատկերն է։ Տեղն էր ըսելու «Եւ դրդոյ ի քոյոց քեզ մատուցանեմք». արդարև այդ պատկերն մի քանի տարի առաջ գծագրուած է Գամառ-Քաթիպայի ներշնչմամբ։ Գծագրիչը պ. Սրապեանն է։ Պ. Գր. Նիկողոսեան, որոյ բերնին մէջն էր միշտ Գամառ-Քաթիպայի անունն, կարդաց օր մը պատկերահանին «Դարիպ մշեցին». այդ տողերը ցնցեցին պատկերահանը որ բերան ուսաւ այդ զորովալիր և սրտայոյզ բանաստեղծութիւնը և դայն երգելով վրձինն ի ձեռին նկարեց Մշեցի Դարիպ Մանուկ Աղբար հայու թշուառութեան այդ կենդանի պատկերը։ Երբ պատկերը պարզեցին պ. Պատկանեանի աչաց առաջ, աչքերը լեցուեցան արտասուքով։ Գատը-գիւղի երեսասարդը շատ նրբամտութեամբ այդ պատկերն ընծայ բերին պ. Պատկանեանի։

Հանդէսը գեղեցիկ էր. Գատը-գիւղցիներէ դուրս ներկայ կը գտնուէին ուրիշ երեք ռուսահայեր պ. Աղէքսանդր Մէլիք-Ազարեանց, պ. Դաւիթ Քալանթարեանց, և պ. Գր. Նիկողոսեան որ այժմ կէս-թրքահայ է. ներկայ էին նաև մի քանի ուրիշ հիւրեր։ Պ. Պատկանեան կորովի բայց սրտաշարժ լեզուաւ մը յայտնեց իւր շնորհակալութիւններ։ Ցայտարարեց թէ ինչ պատիւներ որ իրեն ըրին, նա կընդունի զայն իբր ռուսահայոց եղած. խօսեցաւ սիրոյ, եղբայրութեան վրայ, իւր բոլոր խօսքերը թողուցին գեղեցիկ տպաւորութիւններ։

Երեկոյ էր երբ վերադարձաւ իւր տունն, իւր պատրաստութիւնները տեսնելու և վաղն առաւօտ մեկնելու։ Շատ կողմերէ բարի երթ մաղթելու պիտի դիմեն չոգենաւը, բայց պիտի կարենանք։ Պոլիս այն երկիրն է ուր ճշտապահութիւնը բացառութիւն մէ, բնութեան և անհոգութեան խաղալիքներն ենք։ Օրինակի համար չենք գիտեր թէ ինչ պէտք է ընել եթէ մէզն Վոսփորը պատած լինի վաղն առաւօտ, ինչպէս էր այսօր։ Ամրան վերջի օրերն մինչև աշնան կէսն, և գարնան սկիզբներն շատ առաւօտ թանձր մառախուղ կը պատէ Վոսփորն, այդ մէզն հազիւ կը վարատի առաւօտեան 10—11-ին. կը խանգարուին չոգենաւերու երթևեկութիւններն, ինչպէս այս առաւօտ էր. ժամադրութիւն մը ունէի առաւօտեան ժամը 9-ին և 11-ին տակաւին ծովուն վրայ կը դեգերէինք։ Ուրեմն ես ալ կը պահեմ նամակիս շարունակութիւնն յաջորդ աւուր. արդէն կէս գիշեր է և բաւական շոգ գիշերով մը կարելի չէ այլ ևս գրել։

Պ. Պատկանեանի հետ հաւանօրէն կը մեկնի աստի նաև պ. Կարա-Մուրզա, որ վերադարձած Վենետիկէ, կը փութայ հայրենիք դնալ. սակայն ծնօտի և ակռայներու սաստիկ ցաւ մը շատ դժուարին կընեն խեղճին ճանապարհորդել։

Պ. Կարա-Մուրզայի ճանապարհորդութիւնները յոյժ արդիւնաւոր են եղած։ Վենետկոյ մէջ, Ս. Ղազարու վանքն անարատ պահուած դռներ է այն պատարագն, զոր աւելի քան մէկ ու կէս դար առաջ Մխիթար Աբբահայր բերած է միասին Սեւանայ կղզիէն։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Figaro» լրագիրը դատի է ենթարկված այն պատճառով, որ նախօրօք հրատարակած էր փորձնական սպառազինութեան հրամանը։

—Իտալական լրագիրների խօսքով, իտալական հիւպատոս Սօննար, համաձայն Հռոմից ստացած հրահանգների, պաշտօնապէս այցելեց պրինց Ֆերդինանդին։

—Թիւրքաց պետական գանձարանում զգացվում է աւելի քան երբ և իցէ փողի մեծ պակասութիւն։ Բանը այնտեղ է հասել որ օսմանեան բանկը հրաժարվում է վճարել ռոճիկ օտար երկիրներում եղող թիւրքաց դեսպաններին և թիւրքաց ծառայութեան մէջ եղող գերմանական սպաներին։ Արտասահմանեան լրագիրները հաղորդելով այս լուրը, աւելացնում են, որ թիւրքաց ֆինանսների այսպիսի խանգարված դրութեան ժամանակ հազիւ թէ Բ. Դուռը կարողանայ ձեռնամուխ լինել որ և է ներդործական գործողութեան բօլդարական հարցում։

Է ապրում, բայց այդ հանգամանքը ոչ օրի նախանձը չէ շարժում. ընդհակառակն ամենքը ընտելացել են այն մտքին, որ Զայլդս պէտք է հիւրասիրէ իր տանը Ֆիլադէլֆիա եկող օտարականին։ Զայլդսի տները Ֆիլադէլֆիայում և Նիւյորքում ոչ միայն նշանաւոր են իրանց աղ ու հացով և հիւրասիրութեամբ, այլ և նրանով, որ այդ տները զանազան թանգագին իրերի կատարեալ թանգարաններ են։ Զայլդս շատ է սիրում ցոյց տալ օտարներին հաղագիւտ ժամացոյցների իր հարուստ ժողովածուն, իր հարուստ զրադարանը, ինքնագիրների թանգագին ժողովածուն, որոնց մէջ գտնվում են՝ Բայրոնի, Լիտտոնի, Տէկկէրէի, Դիկէնսի և շատ ուրիշների ձեռագիրները։

Մշտապէս Ֆիլադէլֆիայում ապրելով, որտեղ էլ աշխատել է իր փողերը, Զայլդս առատութեամբ փողեր է տալիս հասարակական պէտքերի համար։ Նա 100,000 դոլլար նուիրեց 1876 թվին Ֆիլադէլֆիայում համաշխարհային ցուցահանդէս կազմելու համար։ Ամառը Զայլդս մեծ ճաշ է տալիս Ֆիլադէլֆիայում լրագիրներ ցրվող տղաներին. հարիւրաւոր երիտասարդներին օգնում է վերջացնել իրանց ուսումը։ Մի խօսքով երբ որ և իցէ կարևորութիւն է զգացվում մանաւոր բարեգործութեան մէջ, բաւական է դիմել Զայլդսին, և մարդ հաւատացած կարող է լինել, որ մերժումն չի ստանայ։

մէկ տարուց մի փոքր աւելի մնալուց յետոյ, արդէն 14 տարեկան եկաւ Ֆիլադէլֆիա, տեղ դրատաւ դրավաճառի խանութում և սկսեց մեծ եռանդով աշխատել և փող ժողովել. երեխայի ճարպիկութիւնը և ընդունակութիւնը այնքան հաւանեցին, որ նրա ռոճիկը սկսեցին աւելացնել, այնպէս որ չորս տարվայ ընթացքում, չնորհիւ անտեսութեան, նա մի քանի հարիւր դոլլար ժողովեց և այդ փողերով իր սեփական առևտուր սկսեց—ուղղով «Լէջէրի» խմբագրութեան շինութեան դիմաց։ Այդտեղ առաջին անգամ նրա գրքերում յղացաւ վերոյշեալ շինութեան և լրագրի տէր դառնալու միտքը, և այդ ժամանակից այդ միտքը ամբողջապէս պաշարեց նրան. նա իրաքանչիւր օր աշխատում էր հաշուել թէ ինչն որքան է մօտեցել իր նպատակին, և այդ բանը օգնում էր նրան տանել ամեն տեսակ զրկանքներ, որոնք դդալի են ամենաչափաւոր կեանք վարող երիտասարդներին անդամ։ Դրքերի առևտուր սկսելով, Զայլդս մեծ տաղանդ ցոյց տուեց հասարակութեան ճաշակը խմանալու մէջ, և երեք տարուց յետոյ, երբ արդէն 21 տարեկան երիտասարդ էր, գլուխ անցաւ մի հրատարակչական ընկերութեան։ Նա իր ոսպասածից աւելի վաղ հարստացաւ, և 1864 թվին գնեց «Phladelphia Ledger» լրագիրը, որը այն ժամանակ աջողութիւն չունէր և էժան գնով առաջարկեցին նրան։ Զայլդս շուտով լրագիրը այնպէս լուացրեց, որ այժմ ամենատարածված և յայտնի լրագիրն է առևտրականների և այնպիսի մարդկանց համար, որոնք յայտարարութիւններ են տալում։ Զայլդսի լրագիրը հարիւր հազար օրինակից աւելի է տարածվում և իրան 40,000 դոլլար եկամուտ է տալիս տարեկան։

Իր սկզբնական նպատակին հասնելով, Զայլդս մտադրվեց հովանաւորել արուեստները, և գլխաւորապէս հոգում էր իր մօտ ծառայող բանւորների վիճակը թեթևացնել։ Այդ բանում նա մեծ աջողութիւն ունեցաւ, որովհետև վայելում է իր մօտ ծառայողների սէրը և յարգանքը. ոչ միայն Ֆիլադէլֆիայի աղքատ դասակարգի մէջ, այլ և ամբողջ Դաշնակցութեան մէջ նա միաձայն բանւոր մարդու բարեկամ է համարվում։ Իր ճաշակով մի հոյակապ շինութիւն կառուցանելով «Ledger» լրագրի համար, այդ տան մի մասը յատկացրեց բանւորների համար։ Զայլդս բոլոր տպարանատէրերից աւելի է վճարում իր բանւորներին, և չը նայելով ուրիշ հրատարակիչների յորդորներին, կատարելապէս հրաժարվում է իր բանւորների ռոճկի չափը պակասեցնել։ Ինքնուրոյն Զայլդսի իրաքանչիւր բանւորը ընծայ է ստանում նրանից, իսկ ծառայութեան յայտնի ժամանակամիջոցը անցնելուց, կամ բանւորի հետ պատահած դժբաղդութեան դէպքում, Զայլդս թոշակ է տալիս բանւորներին։ Նա այն աստիճան հոգում է իր բանւորների մասին, որ նրանց համար չինեց մի դեղեցիկ դերեզմանոց, ուր ձրի տեղեր է տալիս նրանց ենջեցեաներին թաղելու համար։

Ինքն Զայլդս իր ընտանիքով մեծ չքեղութեամբ

բաղմաթիւ ամերիկացիներին յատուկ եռանդից և բարեգործական ձգտումներից, Զայլդս իր օրինակով ապացուցեց, թէ ոռպիսի մեծ ոյժ է ստանում մարդ, երբ նա սկսում է մի նպատակին դիմել և այդ նպատակը միշտ աչքից չէ փախցնում։ Շատերի մասին, որպէս, օրինակ, Կօրնէլի, Խօպկինսի և Կուպէրի մասին պատմում են, որ նրանք ամենքը դեռ ևս պատանեկութեան ժամանակ, մտքումը դրին բարերարութիւն անել իրանց համաքաղաքացիներին՝ կանգնեցնելով այնպիսի հիմնարկութիւններ, որոնց անհրաժեշտութիւնը իրանց անձնական փորձով դիտէին։ Բայց այդ պատմութիւնները չէ կարելի անպայման ապացուցված համարել։ Դեռ ևս պատանեկութեան տարիներում Զայլդս նպատակ դրեց իրան դնել Ֆիլադէլֆիայում հրապարակվող «Լէջէր» լրագիրը, և նրա այդ ձգտումը փառաւոր կերպով իրագործվեցաւ, և փաստը ապացուցված է, որովհետև Զայլդս շատ էր խօսում այդ նպատակի մասին իր երիտասարդ ընկերների հետ, որոնք ծաղրում էին նրան։

Եւ իրաւ, ծիծաղելի չէ արդեօք լսել մի քանի հարիւր դոլլարներ ունեցող 18-ամեայ մի պատանուց, թէ նա մեծ լրագիր կը դնի։ Սակայն այդ յանդուգն մտադրութիւնը Զայլդս իրագործեց շատ կարճ ժամանակամիջոցում։ Բայց Զայլդս, թէպէտ և տարիքով ջահիլ էր, սակայն կենսական փորձով ծեր էր։ Նա դեռ ևս տասներեք տարեկան չը կար, երբ նա սկսեց ծառայել մի առագաստաւոր նաւի մէջ. սակայն ծովի վրա

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի։ Գլխաւոր ֆիզիկական դիտանոցը յայտնում է որ արտակարգ փոթորիկների զուշակութիւնը, թէ Վոլգա գետի վրա և թէ Կասպից ծովում սեպտեմբերի 4-ից մինչև սեպտեմբերի 8-ը, անհիմն է։

ԲԵՐԼԻՆ, 2 սեպտեմբերի։ «Հիւսիսային գերմանական լրագիրը» հաստատում է որ Գերմանիան մերժել է անմիջական միջամտութիւնը բոլգարական հարցի մէջ, բայց պատրաստ է պաշտպանել միւս պետութիւնների առջև Բոլգարիայում ռուսական հարցի մէջ, բայց պատրաստ է պաշտպանել միւս պետութիւնների առջև Բոլգարիայում ռուսական գեներալին փոխարքայի պաշտօնով նշանակելը, եթէ միայն Բ. Դուռը կընդունի այդ տեսակ առաջարկութեան նախաձեռնութիւնը։ Միմիայն Թիւրքիան, որպէս Բոլգարիայի վրա աւատական իշխանութիւն ունեցող պետութիւն, կարող է միջոցներ առաջարկել, որոնցով կարելի կը լինի կոտրել Բոլգարիայի ներգործական և կրաւորական ընդդիմադրութիւնը։ Իսկ մինչև չը պարզվի Թիւրքիայի դիրքը դէպի Բոլգարիան, հազիւ թէ կարելի կը լինի պարզել և միւս պետութիւնների յարաբերութիւնները դէպի բոլգարական հարցը։

ԲԵՐԼԻՆ, 2 սեպտեմբերի։ Բիսմարկ ուղևորվեց դէպի Ֆրիդրիխսրուէ, որտեղ, ինչպէս ասում են, գալու է չուտով և Կայզերը։

ԲՈՄԲԷՅ, 2 սեպտեմբերի։ Կարուլից ստացած տեղեկութիւններին նայելով, Մաչակիի մօտ, օգոստոսի 31-ին, տեղի ունեցաւ էմիրի զօրքերի և տպստամբների մէջ մի ճակատամարտ, որի ժամանակ սպանված և վիրաւորված են 500 մարդ։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ, 2 սեպտեմբերի։ Թագաւոր կայսրը մասնակցեց երէկ թագաւորական ընտանիքի ուղևորութեանը դէպի Ֆրէդէնսբորգ։

ԹԷՀԵՐԱՆ, 2 սեպտեմբերի։ Էմիր-խանը կալանաւորված չէ. նրան աջողվեցաւ ազատվել և նա այժմ, ինչպէս պատմում են, գտնվում է դեռ ևս Աւգանիստանում, պարսից սահմանի վրա, Հերատից դէպի հարաւ։

Կ. ՊՕԼԻՍ, 2 սեպտեմբերի։ Մինիստրների խորհուրդը վճռեց մի շրջաբերական ուղարկել Աւստրիային, Անգլիային և Իտալիային, այդ պետութիւններին համաձայնեցնելու համար ռուսաց առաջարկութեան հետ՝ Բոլգարիայում մի փոխարքայութիւն հաստատելու վերաբերմամբ։

ԼՕՆԴՕՆ, 2 սեպտեմբերի։ Էմիր-խանի դեսպանը դիտաւորութիւն ունի ապստամբեցնել կուշակի ազգաբնակութիւնը, Էմիր-խանին օգնութիւն հասցնելու համար։

ՎԻԵՆՆԱ, 2 սեպտեմբերի։ Կոմս Կալնոկի ուղևորվում է այսօր դէպի Ֆրիդրիխսրուէ, Բիսմարկի հետ տեսակցելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ Աւստրիական դեսպանը վերադարձաւ արձակուրդից։

ՄԷՐՎ, 3 սեպտեմբերի։ Այստեղ հասաւ ինժենէր Պոկլէվսկի-Կոզէլ, որպէս զի վերականգնեցնի սուլթան-բէնտեան թումբը, որի օգնութեամբ պիտի ջրվի Կայսրի՝ Մուրգաբեան անուանված անձնական կալուածքը։ Այդ կալուածքի ոռոգմամբ կը պահպանվի 300 հազար դեսիատին տարածութիւն ունեցող ամենահարուստ մերվեան անտառը։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 3 սեպտեմբերի։ Թագաւոր կայսրը, Թագուհու կայսրուհու և օգստափառ ազգականների հետ, այցելեցին երէկ Գելսինգէրում Դանիայի թագուհու քրոջը։ Երեկոյեան բարձրագոյն հիւրերը վերադարձան Ֆրէդէնսբորգ ամրոցը։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, վեներական և ատամի ց.
կին-բժիշկ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—9—10 ժ. և 11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
Ա. ԳՈՒՐԿՕ—$12^1/_2$—$1^1/_2$ ժ. աչքի և ներքին ց.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ կանանց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
ՊՕՊՕՎԵԱՆՑ—6—7 ժ. կաշուի, ներքին և ջղային ց.
Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մոզեր։
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ **ՌԻՑԻԻ** *մօտ աչքացաւով հիւանդների ընդունելութիւնները նորից սկսվում են սեպտեմբերի 1-ից ամեն օր առաւօտեան* (Արսենալնի փողոց, № 17)
2—3

ՄԱՆԿԱԲԱՐԶՈՒՀԻ օր. **ՍԱՆԴԻՏ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ** *վերադառնալով արտասահմանից պատիւ ունէ յայտնելու իր հիւանդներին որ բնակվում է այժմ Սոլոլակի փողոց, Գուրգենովի տան, տիկին Տօլլէի մագազինի հանդէպ.* 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐԶՈՒԹԻՒՆԸ *խնդրում է Թիֆլիս քաղաքի պանդոկների, ուտելեղէնների խանութների և իջևանների տէրերից շնորհ բերել եկող սեպտեմբերի 9-ին առաւօտեան 10 ժամին վարչութեան գրասենեակը իր միջից դէպուտատներ ընտրելու հետևեալ քառամեակի համար պանդոկների վերաբերեալ կանոնադրութեան 22 և 56 յօդ. համաձայն, միջին ակցիզը կարգադրելու համար։* 2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ.*

Չորեքշաբթի, սեպտեմբերի 16-ին, ՄԵՆԳՐԵԼԻԱ (MINGRÉLIE) *շոգենաւը, նաւապետ* ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) *դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունի գալերէում,* № 103.
2—4

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Զ ա փ ա ւ ո ր վ ա ր ձ ա տ ր ո ւ թ ե ա մ բ յանձն է առնում պատրաստել երեխաներին միջնակարգ ուսումնարանների ստորին դասատների համար։ Հասցէի համար դիմել „Մշակի“ խմբագրութեանը։ 5—15

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ։*

Չորեքշաբթի, $^9/_{12}$ *սեպտեմբերի, առաւօտեան,* ԲԱԹՈՒՄ *կը հասնի շոգենաւ* LE LABOURDONNAIS (ԼԸ ԼԱԲՈՒՐԴՕՆԷ) *նաւապետ* SIBILET (ՍԻԲԻԼԷ) *և կուղևորվի ուրբաթ օր, սեպտեմբերի* $^{11}/_{23}$*-ին դէպի* ՄԱՐՍԷԼ, *մտնելով Կ. Պոլիս և յարակցելով Եաֆա, Պօրտ-Սայիդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ։*

Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ *պ. Գ.* ԷՍՍԷՆԺԷՐԻՆ, *իսկ* ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑԻՆ։

1—3

ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

(Զորս տարրական դասարանների և պատրաստական դասատան երեք բաժանմունքների դասընթացով)

ԶԱԳՈՒՄԷՆՆԻ ԵՒ ԽԻԴԴԷԿԷԼԻ

(Միքայէլեան փողոց, Բէալական ուսումնարանի հանդէպ)։

Ընդունելութեան քննութիւնները և վերաքննութիւնները կը սկսվեն օգոստոսի 20-ից, ամեն օր, բացի տօն օրերից։

Ուսումն սկսվում է սեպտեմբերի 1-ին։ Հայերի համար աւանդվում են՝ Հայոց լեզու և կրօն։

Տեղեկութիւնների մասին կարելի է դիմել ուսումնարան, առաւօտեան 8 ժամից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ, և նոյնպէս Խիդդէկէլի գրավաճառանոցը (Գալֆինսկի պրոսպէկտ, գիմնազիայի հանդէպ)։ 6—6

ԾԽԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

ԲՕՍՏՕՎԻ (Դոնի վրա) ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐԻ

ԱՍԼԱՆԻԴԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

Մագազինը Դվորցովայա փողոցում, Ղալաքարօվի տանը, Թիֆլիսում, պատիւ ունի յայտնելու պ. պ. ԾԽՈՂՆԵՐԻՆ *և* ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ, *որ փետրվարի 15-ից ներկայ թուականս բաց արինք ծխախոտի առևտուրը, որտեղ կարելի է ստանալ* ԾԽԱԽՈՏԻ *և* ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ *ամեն տեսակները մեր գործարանից բերված։ Մեր* ԾԽԱԽՈՏԸ *իր առանձին յատկութիւնների համար,—լաւ համ, մեղմութիւն և դուրեկան արօմատ, վայելում է երկարամեայ հռչակ և մեծ տարածութիւն Ռուսաց կայսրութեան և արտասահմանի շատ քաղաքներում։*

Թիֆլիսում նոյնպէս և Անդրկովկասում մեր ֆաբրիկայի ծխախոտի արդիւնքները մինչև այժմ յայտնի չէին, այդ պատճառով մենք բաց արինք ծխախոտի մագազինը, ցանկանալով այդ մեր արդիւնքները երկրի մէջ մտցնել։

Խ ն դ ր ո ւ մ է ն ք պ.պ. ծխողներին և վաճառականներին անտես չառնել ծանօթանալու մեր ֆիրմայի արդիւնքների հետ։

Օտարաքաղաքացիների պահանջները կատարվում են շուտ և ճիշդ կերպով, փոստի ծախսը մագազինի վրա է։ Պրէյսկուրանտները ցանկացողներին անվարձ են ուղարկվում։

☛ *Պ.Պ.* ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՆՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԶԻՋՈՒՄՆ։

ԱՍԼԱՆԻԴԻ *եղբայրներ* 21—25

EXPORTATION-IMPORTATION

CONSTANTIN P. CHÉHIANTZ

MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԽԵԱՆՑԻ *առևտրական գրասենեակը լինելով* ՄԻԼԱՆ, *և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվէյցարիայի և Ֆրանսիայի ֆաբրիկանտների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի թելացորդք, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում։ Յանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար։ Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնտու պայմաններով փող կը տայ ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հասցէով.* Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) МИЛАНЪ (Италія).

Մի պարոն, ունենալով իր մօտ մեծ քանակութեամբ «ՊՍԱԿ» և «ԹԶՈՒԿ» վերնագրով գրքերից, ցանկանում է այդ գրքերը նուիրել ձրիապէս զանազան տեղերի հայոց դպրոցներին։ Ամեն մի դպրոց կարող է ստանալ իւրաքանչիւր գրքից ոչ աւելի քան երեք օրինակ։ Այն դպրոցները, որոնք կամենում են ստանալ այդ գրքերից, պէտք է ուղարկեն իւրաքանչիւր գրքի մի օրինակի համար մի հատ հինգ կոպէկանոց փոստային մարկա, իբրև ճանապարհածախս։ Ցանկացողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով. Тифлисъ, Редакція «Мшакъ», Теръ-Микаельянцу. 8—10

Մի ՈՒՍՈՒՑԻՉ, որ ուսումնասիրել է ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԱՑՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ և ունի շատ աջող ձայն, ցանկանում է Հայոց դպրոցներում երգեցողութեան դասեր ունենալ։ ԿԸ ՍՊԱՍԱՒՈՐԷ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒՄ։ Պայմանների մասին պէտք է դիմել „Մշակի“ խմբագրատունը։ Համաձայն է գնալ գաւառ։ 3—3

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ *ցանկանում է տներում մասնաւոր դասեր տալ և պարապել երեխաների հետ Հայոց լեզուից։ Ընդունում է նոյնպէս և գիշերօթիկ աշակերտներ և աշակերտուհիներ։ Հասցէն հարցնել „Մշակի“ խմբագրատանը։* 3—5

Дозволено цензурою, Тифлисъ 4 сентября 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.